

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԱՅՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌՓԻՒ

Նոյեմբեր 13ի կիրակիի յետ միջօրէին, էջմիածնէ ստացուեցաւ Նոյ. 12 թուակիր հետեւեալ հեռագիրը, ֆրանսերէն, ստորագրուած՝ Պր. Թորոս Մառմանեանէ, որ Երուսաղէմի Հայ հասարակութեան ներկայացուցիչն էր Ազգ. Եկեղ. Ընդհ. Ժողովին մէջ.

Խորէն Արքեպիսկոպոս ընտրուեցաւ կարողիկոս. ընտրուեցաւ նաեւ Հոգեւոր Գերագոյն Խորհուրդը. օծումը կը կատարուի վաղը:

Այս հեռագիրը ստացուելուն պէս, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի նշան ուրախութեան, անմիջապէս հնչեցնել տուաւ Մայր Տաճարին գանդակները. պատրիարքարանի մեծ գահլիճը հրաւիրեց ամբողջ Միաբանութիւնը. հրապարակաւ կարգաց աւետաւոր հեռագիրը. ընտրութեան այս բարեկամող արգիւնքին առթիւ խնդրութեան և շնորհատրութեան ուղերձ մ'ըրաւ. Միաբանութիւնը համախումբ երգեց «էջ միածինն ի Հօրէն» շարականը, և «Պահպանիչ»ով և Հայր մեր»ով վերջ գտաւ դումարումը:

Յաջորդ օրը, 14 նոյեմբեր, Ս. Պատրիարք Հայրը հետեւեալ հեռագիրը ուղղեց Ն. Օծութեան՝ նորընտիր Ս. Հայրապետին ի Ս. էջմիածին, լատինատառ՝ հայերէն բառերով:

Հայկական Սիոն ցնծագին ողջունե՛ գործանաւոր ընտրութիւն և օծումն Վեհիկ յկրոս Հայաստանեայցս. մասուցանեմ զհաւաստի շնորհաւորութեան, հնազանդութեան, մեծարանաց:

Օր մը ետքը, Նոյ. 15ին, Ս. Պատրիարքը էջմիածինէն ստացաւ Նոյ. 14 թուակիր հետեւեալ հեռագիրը, ֆրանսերէն, ստորագրուած՝ Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանէ, որ ներկայացուցիչ էր ընտրուած Երուսաղէմի Միաբանութեան, Ազգ. Եկեղ. Ընդհ. Ժողովին մէջ.

Խորէն Արքեպիսկոպոս կարողիկոս ընտրուեցաւ Նոյ. 12ին, և օծուեցաւ Նոյ. 13ին. ընտրուեցաւ նաեւ Հոգեւոր Գերագոյն Ժողովը:

Երկու հեռագիրներ ևս Տնօրէն Ժողովոյ նիստին մէջ արձանագրուելէ վերջ, որոշուեցաւ Նոյ. 20ի կիրակիին, Ս. Պատարագի առան Հոգեհանգիստ կատարել հոգելոյս Տ. Գեորգ Ե. կաթողիկոսին համար, ինչպէս նաև զոհարանական հանդիսաւոր մաղթանք նորընտիր Հայրապետին գահակալութեան առթիւ, և այդ օրը առաջին անգամ յիշել Ն. Ս. Օծութեան անունը, ի ժամ Ս. Պատարագի, և եկեղեցական պաշտամանց աղօթքներու և քարոզներու մէջ: — Ըստ այսմ գրաւոր հրահանգ տրուեցաւ բոլոր Ս. Տեղեաց Տեսչութեանց և Պատրիարքութեանս թեմական վայրերու եկեղեցիներուն:

Նոյն օրը, այդ զոյգ պաշտամունքները մեծագոյն հանդիսաւորութեամբ կատարուեցան Ս. Յակոբեանց մայր տաճարին մէջ, ժողովուրդի խուսն բազմութեան մը ներկայութեամբ: Ծառու ընթերցուածէն վերջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: «Նւս առաւել»էն անմիջապէս առաջ Ս. Պատրիարք Հայրը Աթոռէն խօսեցաւ սրտագրաւ քորով մը. բացատրեց այս ընտրութեան իմաստը ազգային և եկեղեցական տեսակէտով. խօսեցաւ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռոյ նշանակութեան մասին, շեշտելով անոր ներկայացուցած գաղափարը, իրրև խորհրդանշան միութեան և հոգեւոր կեանքի ամբողջ Հայութեան. յարգանք ընծայեց հանդուցեալ կաթողիկոսի յիշատակին և սրտեռանդն մաղթանքներ ըրաւ նորընտիր Ս. Հայրապետի կենաց և արգիւնալից գործունէութեան համար: Քարոզէն անմիջապէս վերջ կատարուեցաւ զոհարանական մաղթանք, որմէ յետոյ առաջին անգամ Ս. Պատարագի միջոցին յիշատակուեցաւ Տ. Խորէն Արքեպիսկոպոսի կաթողիկոսի անունը:

Նոյն օրը Ս. Պատրիարք Հայրը Ն. Ս. Օծութեան՝ Վեհ. Արքեպան Հայրապետին ուղղեց իր և Միաբանութեան կողմէ շնորհաւորական յարգանաց գրաբար գրութիւն մը:

Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն, Ժ Ո Ղ Ո Վ Ա Կ Ա Ն

ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՒՆՔ

Ս. Աթոռոյո Տնօրէն Խորհուրդը նշեցերք ամսայ ընթացքին, իրրեւ վարչական մարմին գումարուեցաւ եօթն անգամներ, իսկ իրրեւ հոգեւոր ատեան՝ երեք անգամներ, և զրազեցաւ Ս. Տեղեաց, կալուածական, վարչական, թեմական, մատակարարական, ամուսնական և ժառանգական գործերով:

1 նոյ. Գշ. — Սրբազան Պատրիարք Հայրը, Ս. Սմբատ Սրբազանի և Տ. Գեղամ վարդապետի հետ Բեթղեմէմ և Պարոնաէր գնաց, ձեռնաստաններու կութքին առթիւ հաշուական ճշգրտութեամբ համար:

2. նոյ. Գշ. — Լուսարարացեալ Տ. Մեծորոյ Սրբազան և Տ. Կիրեղ վարդապետ ներկայ գըտնուեցան Անկիլիքան Եպիսկոպոսին նախագահութեամբ տեղի ունեցած անգղիական աղջկանց վարժարանի տարեկան հանդէսին: այս դպրոցին մէջ կան հայ ուսանողուհիներ:

3 նոյ. Եշ. — Ս. Պատրիարք Հօր այցելեցին Ամերիկեան Դեր-Ղիւպատոս Մր. Պլաշֆօրտ և Ե. Ք. Ընկերութեան երուսաղէմի կազմակերպութեան գլխաւորները:

7 նոյ. Բշ. — Ս. Պատրիարք Հօր՝ իր առաջին այցելութիւնը տուաւ Միացեալ Նահանգաց նոր հիւպատոս Ա. Ք. Սլօան, ընկերակցութեամբ Մր. Պլաշֆօրտի:

8 նոյ. Գշ. — Ս. Պատրիարք Հօր՝ իր առաջին այցելութիւնը տուաւ Իտալիոյ նոր հիւպատոս Կօմ. Մարիանօ տի Աննելիս:

9 նոյ. Գշ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ զիւանապետ Պ. Կ. Նուրեանի, փոխադարձ այցելութեան գնաց Միացեալ Նահանգաց և Իտալիոյ հիւպատոսներուն:

Նոյն օրը, երեկոյեան, Սիւրիայէն վերադարձաւ Վսեմ. Ոսկան Պէյ Մարտիկեան, որ յաջորդօրն իսկ վերսկսաւ իր ելմտական ուսումնասիրութեանց շարունակութեան:

11 նոյ. Ուր. — Լուսարարացեալ Տ. Մեծորոյ Սրբազան և Տ. Կիրեղ վարդապետ յանուն Սրբազան Պատրիարքին ներկայ գտնուեցան պատերազմի ատեն մեռած զինուորներու գերեզմանատան մէջ կատարուած պաշտամունքին և պսակ մը դրին մեծ խաչարձանին ըստօրոտը:

12 նոյ. Շր. — Տ. Սմբատ Սրբազան և զիւանապետ Պ. Կ. Նուրեան Յօսպէ գացին, ի զարմին Իեմէլի ազգապատկան կալուածոց վերաբերեալ խնդիրներու առթիւ բանակցելու համար տեղւոյն քաղաքացեալութեան հետ: Տ. Սմբատ Սրբազան, այս առթիւ յաջորդ օրը, կիրակի, ներկայ գտնուեցաւ եկեղեցական պաշտամունքին, և քարոզեց:

14 նոյ. Բշ. — Տ. Սմբատ Սրբազան և Պ. Նուրեան վերադարձան:

15 նոյ. Գշ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Ս. Քաղաքին համր-խուլերու վարժոցին տեսուհին՝ Օր. Մառի Շէփմէն, իրեն հետ ունենալով իր սաներէն երկու զժրախտ տղակներ: Երեք շըրթուեցի շարժումներու իմաստը հասկնալու և Եօզաւորեալ ձայներով ինքզինքնին հասկցնելու սպաւորիչ փորձեր ըրին:

17 նոյ. Եշ. — Տ. Սմբատ Սրբազան և Ոսկան Պէյ քննական նպատակով Բեթղեմէմ գացին:

22 նոյ. Գշ. — Սրբազան Պատրիարք Հօր այցելեց Հայ կաթողիկ հասարակութեան մեծաւոր Հ. Յակոբ վարդապետ, ընկերակցութեամբ Հ. Մանուէլ վարդապետի, հայրապետական ընտրութիւնը շնորհաւորելու համար:

23 նոյ. Գշ. — Սրբազան Պատրիարքը, Տ. Սմբատ Սրբազանի և զիւանապետ Պ. Կ. Նուրեանի ընկերակցութեամբ այցելեց ՎԲԵՄ արտօի վրայ կառուցուող մեծ շէնքերը: առաջին յարկը արդէն յրանալու մօտ է: կարգադրուած է որ մինչև Մուհարրէմ, այսինքն ելմտական տարին, աւարտի շէնքը, որդէտղի անմիջապէս կատարուի վարձատուութիւնը:

28 նոյ. Բշ. — Սրբազան Պատրիարք Հօր հրատեղի այցելութեան եկաւ Ղպտոց երուսաղէմի եպիսկոպոս Տ. Վասիլիոս, ձմրան պատհանաւ Եգիպտոս երթալուն առիթով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԲԵՄՎԱԿԱՆ

5 նոյ. Շր. — Գիւտ Խաչի տօնի կիրակմուտի առթիւ, ըստ սովորութեան, Սրբազան Պատրիարք Հօր նախազօհութեամբ Միաբանութիւնը շըրթաշափառօի թափօրով գնաց Ս. Յարութիւն, ուր երեկոյի պաշտամունքը կատարուեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ:

6 նոյ. Կիր. — Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ կատարուեցաւ զիշերային և աւաւօտեան պաշտամունքը: Տ. Սիոն վրդմատոյց սուրբ պատարագը: Ս. Պատրիարքը քարոզեց օրուս տօնին առթիւ, կատարուած խաչի զիւտին մէջ մասնանշեղով մտցուած կոշումը վերիշելու պարտականութեան խորհուրդը:

Պատարագէն վերջը կատարուեցաւ տարւոյն ամէնէն մեծահանդէս թափօրներէն մին: Ս. Պատրիարքը ամբողջական զգեստաւորւմով, ամպնովակի տակ, ի ձեռնին կը կրէր Կենաց Փայտի մատուրին մեծ խաչը, զոր անձամբ բարձրացուց Խաչգիւտի ստորերկրեայ օրբավայրէ: ամբողջ եկեղեցականներէ և ժողովուրդաւորներէ կազմուած թափօրը Ս. Պատրիարքին հետ այսպէս երեք անգամ դարձաւ Ս. Գերեզմանին շուրջը, Խաչի շարականներու զմայլանքով լեցնելով բրիտանիկութեան ընդհանրական մեծ Տաճարը: Ներկայ էին երուսաղէմի ամբողջ հայութիւնը, տեղացիք և զաղթականք:

● 11 նոյ. Ուր. — Ս. Պատրիարք Զօր Նախագահութեամբ, այսօր Մայր տաճարին մէջ, յետ առաւօտեան ժամերգութեան, կատարուեցաւ Զոգնահանգիստ, Մեծ Պատերազմին մէջ ըրոյր մեռածներուն համար:

● 12 նոյ. Շր. — Ս. Յարութեան Տաճարի տարւոյն զուրթին մէջ մեզ պատկանած Ս. Յոգնանդէս մատուռին մէջ մատուցուեցաւ այսօրուան Աթոռի պատարագը. զոր կարելի չէր եղած իր բուն օրը՝ Աւետարանչաց տօնին՝ կատարել. օրի անյարմարութեան հետեւանքով, ժամարարն էր Տ. Պարզեւ վարդապետ:

● 13 նոյ. Կիր. — Մայր Տաճարին մէջ պատարագեց Տ. Գեղամ վարդապետ. բարոզեց Տ. Տիրան վարդապետ, որ բացատրելով սրբոյն Պօղոսի բմբրունու մը առարելական կոչումի մասին, զայն ներկայացուց իբրև աստուածային պատգամատրութեան պաշտօն մը մարդկային կեանքի բարոյական ազնուացման նպատակով:

Այսօր, յետ ուտըր պատարագի, կատարուեցաւ պաշտօն հանգստեան վրան հոգոյ ողբացեալ Լեւոն Զիլինկիրեանի, որուն յիշատակին համար սիրոյ եւ յարգանքի խօսք մ'արտասանեց Ս. Պատրիարքը, արարողութիւնէն անմիջապէս առաջ:

● 17 նոյ. եշ. — Երզնկացի միտքան ծերունի Արրահամ պապա. Յոպպէի բազմամեայ խոնարարը երէկ վախճանած ըլլալով, այսօր յուղարկուորութիւնը կատարուեցաւ պատշաճ վայելչութեամբ:

● 18 նոյ. Ուր. — Լրեշտակապետաց տօնի նախատեանկ եւ երեկոյի ժամերգութիւն կատարուեցան Ս. Լրեշտակապետաց վանուց տաճարին մէջ:

● 19 նոյ. Շր. — Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն եւ սուրբ պատարագ կատարուեցան նոյն տաճարին մէջ. Լրեշտակապետաց տօնի առթիւ: Տնօրէն ժողովոյ անդամ Տ. Լայկազուն վարդապետ Յոպպէ մեկնեցաւ վաղը բարոզելու համար տեղւոյն եկեղեցիին մէջ, հայրապետական զոհորանական մաղթանքին առթիւ:

● 25 նոյ. Ուր. — Տ. Սմբատ Սրբազան, ընկերակցութեամբ ութը վարդապետներու եւ երկու սարկաւազաց, յանուն պատրիարքարանիս պատուեց յուղարկուորութիւնը Բեթղեմէմի հայ հասարակութեան նահապետին, Մարկոս էֆ. Նասարեանի, որ այս առաւօտ մեռած էր իննսուներեք հասակի մէջ: Ս. Աթոռոյ իրաւանց հաւատարիմ պատուական զգային մըն էր, հայր բազմանդամ ընտանիքի կը պատկանէր Մշեցիներու այն զերգաստանին, որուն նախահայրը եղած է Պարսնուէր Գրիգոր մեծանուն պատրիարքի սպասաւոր Մշեցի Ներսէս:

● 27 նոյ. Կիր. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի չափական Պողոթնայի վերնամատուռին մէջ: Բարոզ յիսուեցաւ այսօր, միւս քրիստոնէից պաշտամունքին հետեւանքով յառաջ եկած բազմաձայնութեանց պատճառաւ:

ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ԵՒ ԿԲՐԱԿԱՆ

● Ժառանգաւորաց բաժնի նոր ուսանողաց թիւը լրացած ըլլալով Յայեմբերի առաջին կիսուն, դասախօսութիւնք նոր ծրագրի համեմատ իրենց վերջնական կազմաւորութիւնը ստացան:

● Պ. Ներսէս Թամամեան, որ Պէրպլեան վարժարանի ընթացիկ Գանիւրի մէջ աւարտել էր վերջ, իբր երկու տարիներ ետ հետեւած էր Սօղոմի դասախօսութեանց ի Բարիկ, ժառանգաւորաց դասաւանդներուն օգնական ուսուցչութիւնը ստանձնեց:

● Ուսումնական Խորհուրդը սնօրինութիւններու ըրաւ «Սիոն» ամսաթերթի բարգաւաճման, «Եղիւզ Պատրիարք Գուրեան» մեջանակի յառաջիկայ տարիէն սկսելով գործադուրեան, եւ Տպարանի առաւելագոյն զարգացման համար:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք հետեւեալ նուէրներ:

Սիւնից

Երուսաղէմացի ճարտարապետ Մեծ Տիար Մեկերի Մեկերեան, իր մատակարար զաւակին Լայկի մանուան տխուր առիթով, 20 օրինակ Սիւնի կը նուիրէ աղքատիկ կրթական հաստատութեանց:

Կիւպլեկեան Մասնագործներու Ս. Յակոբեանց

- 1.— Զոգ. Տ. Լամազասպ Վրդ. Լազարեանէ
1. Աստուածաշունչ 1873.
2. Միւրիմարեան Յորեմեան, 1701-1901
3. Աղուական Երկիր եւ Գրացիք (Մակար Ծ. Վրդ. Բարխուդարեանց).
4. Սարկաւազի Տարեցոյցը, 1932.
5. Գլխի ճակատի զէպքերը (Միհրան Թուրիկեան).
6. Պատարագամատոյց շայերէն եւ Անգլիերէն, Լոնտոն, 1887.
7. Զարգը Երկրից առ Ազգոյ Իշխան (Յովհաննէս Վրդ. Երզնկացի).
8. Սօփիերք շայկականք, 1853, Լատար Ա.
9. The Czechoslovak Republic (Jaroslav César and Frantisek Pokorny, Prague, 1922.
10. Rossia pode Skipetrome Romanoveixe, S.-Peterburge, 1912.
- 2.— Մ. եւ Մ. Պարսմեանէ «Կեանք եւ Արուեստ» Տարեգիրք, Գ. Տարի, 1933:
- 3.— «Էլայ Մշակոյթի Օր» շարատարակութիւն շայ Գրական Ակումբի, Փարիզ, 1932:

